պատկը, ստացել է Նոր եկեղեցի և մի ամբողջ յարկաբաժին իւր կահ կարասիքով Տակարեանների առատ նուիրաբերութեան շնորհիւ: Նպատակից յանձնաժողովը օգնութեան է հասել հեռաւոր գաւառներում հիմնուած որբանոցներին և դպրոցներին և կեդրոնական վարչութիւնն աշխատել է դպրոցների յառաջադիմութեան վերայ առանձին ուշադրութիւն դարձնել: Արմաշու Դպրեվանքը ծաղկում է պատրիարքի բարձր հսկողութեան տակ և անցեալ տարի ևս եկեղեցուն վեց երիտասարդ Նորընծայ կուսակրօն է տուել: Այդ հաստատութիւնն առ հասարակ սկսել է կարևոր դեր խաղալ մեր հոգևոր կեանքի մէջ, 1890—1906 տարիների ընթացքում տուել է 28 կուսակրօն եկեղեցական, որոնցից շատերը առաջնորդական և քարոզչական պաշտօններ են կատարում և մօտ 200 ուսուցիչ: Եկեղեցական երգեցողութիւնն ևս սկսել է բարեկարգուել. անցեալ տարուայ վերջերին սկսել են երգել պատրիարքական մայր և միւս եկեղեցիների մէջ հանգուցեալ Եկմալեանի պատարագը:

Գ. վ. Յովսէփեան

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Յունուարի մէկին Մայր տաճարում հայրապետական մաղթանք կատարուեցաւ Նոր տարուայ առթիւ: Պատարագից յետոյ միաբանութիւնը ներկայացաւ Ս. Հայրապետին շնորհաւորելու Նոր տարին:

Յունուարի 6-ին միաբանութիւնը, Ճեմարանի ուսուցչական խումբը, Սինոդի պրոկուրորը իւր ստորադրեալ ծառայողներով, գաւառապետը և միւս աստիճանաւորները ներկայացան Ն. Սրբութեան շնորհաւորելու Քրիստոսի Ծննդեան մեծ տօնը, իսկ 15-ին Ն. Սրբութեան անուանակոչութիւնը:

Մայր Աթոռի տնտեսական անձուկ վիճակի պատճառով ժամանակաւորապէս փակուած են սեղանատունն ու հացատունը: Արձակուած ծառաները ստացել են նախօ-

րօք երեք ամսուայ ռոճիկ, իսկ աղքատները գրամական նպաստ կստանան չափաւոր քանակութեամբ։ Այս կարգադրութեամբ յոյս կայ տարեկան բաւական խոշոր գումար տնտեսել և այն ձրիակերութեան առաջն առնել, որ կատարւում էր սխալ հասկացուած բարեգործութեան անուան տակ։ Վանքի Ագարակում ևս պէտք է վերջանայ անասնապահութիւնը, և միայն հարկաւոր չափով լծկան անասուններ պահուին թանգագին բոյսեր ցանելու համար։

† ՆԱՀԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Հոկտեմբերի 1-ին Ն. Նախիջևանում իւր մահկանացուն կնքեց մեր միաբանութեան բազմաշխատ և նշանաւոր անդամներից մէկը՝ Նահապետ եպիսկոպոս Նահապետեան՝ 58 տարեկան հասակում։ Նորա մահուան լուրն անսպասելի էր, որովհետև մարմնով առողջ էր և օրինակելի իւր կեանքի կանոնաւորութեամբ։ Բայց Աստուծոյ կամքն էր, որ նա կնքէ իւր երկրաւորը մի այնպիսի ժամանակ, երբ Մայր Աթոռը, մեր եկեղեցին, այդպիսի եկեղեցականների ամենամեծ կարիքն ունէր, երբ մեր եկեղեցական ներքին կեանքի չփոթութեան ժամանակ միակ մարդն էր, որ իւր ներկայութեամբ պատկառանք էր ներշնչում և կարգ ու կանոն թելադրում իւր շրջապատողներին։ Նահապետ եպիսկոպոսի մահուամբ գերեզման է իջնում մեր եկեղեցու վերակենդանութեան և պայծառութեան գաղափարի լաւագոյն ներկայացուցիչներից մէկը։

Նա ծնուած էր 1848 թ. Նոյեմբերի 28-ին Ախալցխայում՝ ազնուական ընտանիքի մէջ։ Նորա հայրն էր Գասպար Նահապետեան, որ պետական ծառայութեան մէջ բարձր աստիճանների հասնելուց յետոյ՝ կեանքի վերջին տարիները Թիֆլիսում եկեղեցու ծառայութեան նուիրեց որպէս երեցփոխ։ Սկզբնական կրթութիւնը հայրենի